ՀԱՄԱՍՏԵՂԻ ԵՎ ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Համաստեղի (Համբարձում Կելենյան, 1895—1966) հոգևոր ժառանգության հետաքրքիր էջերից է սրա նամակագրությունը Ս. Վրացյանի (Գրիգինյան, 1882—1969) հետ։ Համաստեղի նամակները պահվում են Բեյրութում՝ Համազգայինի արխիվում[1], իսկ Ս. Վրացյանի նամակները՝ Գրականության և արվեստի թանգարանում (այսուհետև՝ ԳԱԹ)[2]։

Համաստեղի և Ս. Վրացյանի նամակագրությունը շարունակվել է քառասունից ավելի տարիներ, որոնց ընթացքում աշխարհում շատ բան է փոխվել, բայց նրանց բարեկամությունը գիմացել է ժամանակի փորձությանը։ Գրողի տաղանդի նկատմամբ ունեցած մեծ համակրանքով է բացատրվում Վրացյանի նամակների բարեկամական, երբեմն ներողամտության հասնող ոգին։ Հանգամանքների բերումով Համաստեղը կանգնած էր կուսակցական ընկերներին բաժանող սահմանագծին. ողջ կյանքում սիրել է «Հայրենիք»-ի[3] խմբագրատունը, ուր լինում էր գրեթե ամեն օր և որտեղ հայի ու հայության կարոտն էր առնում։ Ս. Վրացյանը, ինչ-ինչ գեպքերից հետո կտրուկ փոխելով վերաբերմունքն ամսագրի չուրջ հավաքված ընկերներից մի քանիսի նկատմամբ, նամակներում փորձում էր մեկնաբանել իր վիրավորումը, միշտ հարգելով գրողի՝ ինքնուրույն մտածելու, գործելու իրավունքը։ Եղակի և օրինակելի վարքագիծ, երբ առաջնային մարդկանց բաժանող տարբերությունները չեն, այլ միավորող նմանությունները։ Համաստեղին ու Վրացյանին միավորում էր նաև Երկրի ու նրա հոգի կարոտը, կանչը։ «Վարչակարգերը մնայուն չեն, ժամանակաւոր են, կուգան ու կ'երթան։ Երէկ զաչնակ էր, այսօր համայնավար, վաղը ուրիշը կուգայ։ Կարևորը այն է, որ ժողովուրդը մնայուն կերպով կապուի իր հողին։ Եվ եթէ կապուած է, անխուսափելիօրէն կը տիրանայ իր ազատ իշխանութեան»,—«Սփիւռք և Հայրենիք» դեկուցման մեջ պնդում էր Ս. Վրացյանը[4]։

Համաստեղը հիացած էր Վրացյանի մանկավարժական գործունեությամբ։ Նա իր դուստրերին ուսման ուղարկեց Բեյրութ՝ Համազգայինի ճեմարան, որի տնօրենը 1951 թվականից Ս. Վրացյանն էր։ Նա գնահատում էր ճեմարանում հայ մարդ, հայ մտավորական գաստիարակելու ջանքերը։

«Գործիչը մահից յետոյ էլ գործով կենդանի եւ պատասխանատու է իր արարքների համար թէ՛ ժամանակակիցների եւ թէ՛ յաջորդ սերունդների առջեւ»,—կարդում ենք Ս. Վրացյանի «Հին թղթեր նոր պատմութեան համար» գրքում[5]։ Քաղաքական գործչի, նրա գործի գնահատականը կտա ամենատես ու անաչառ ժամանակը, իսկ նամակներում Վրացյանը երևում է մարդկային նկարագրի նոր ու հետաքրքիր գծերով, գրականության խոր իմացությամբ ու գրականագիտական նուրբ վերլուծություններով։

Պահպանելով բնագրի ուղղագրությունն ու կետադրությունը՝ այստեղ կատարել ենք անհրաժեշտ շտկումներ՝ հետևելով դասական ուղղագրության և արևմտահայերենի կետադրության կանոններին։ Համաստեղի՝ Ս. Վրացյանին ուղղված նամակները գրված են Բոստոնում։

Մ. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ապրիլ, 26, 1927
Փարիզ

Սիրելի ընկ. Համաստեղ.

Երևանից «Դրօշակ»ի[6] խմբագրութեան անունով ուղարկել են մի շարք գրութիւններ՝ խնդրելով, որ ուղարկեմ Ձեզ մշակելու և դրական աշխատանքների նիւթ ծառայեցնելու համար։ Հաճոյքով կատարում եմ այդ խնդիրը, թէև չգիտեմ՝ կը համապատասխանե՞ն ուղարկելիք նիւթերը Ձեր դրական նախասիրութիւններին։ Ներփակ կը գտնէք այդ գրութիւնները։

Առիթից օգտւում եմ նաև յայտնելու Ձեզ ընկ. Աւ. Իսահակեանի Երևանից ուղարկած լուրը (բերանացի) Ձեզ հաղորդելու համար։ Նա ձեզ խորհուրդ չի տալիս այժմ գնալ Հայաստան։ Թէ ինչո՞ւ, իհարկէ, չի ասում ու չի էլ կարող գրել։ Բայց, կարծում եմ, դժւար չէ կռահել. մթնոլորտը մտաւորական

մարդկանց համար այնտեղ շատ է ճնշիչ այժմ։ Հաւանական է, որ ինքն էլ կը վերադառնայ և այն ժամանակ հանգամանօրէն կը գրէ Ձեզ։

Ճիշտն ասած, Աւետիքի այս լուրը շատ ծանր ազդեց։ Եւ եթէ ես մօտէց ծանօթ չինէի նրան, գուցէ և չափազանցութիւն համարէի, բայց քանի որ Իսահակեանն է, որ դիտելու սուր ընդունակութիւն ունի, չափազանցութիւն չպէտք է համարել։ Ափսո՜ս որ Դուք չէք կարող գնալ և ազատ չփում ունենալ Երկրի հայ ժողովրդի հետ, ապրել Երկրի ծոցում, Հայ միջավայրում, Մասսի ստուերի տակ, Հայ դաժան, բայց հզօր բնութեան մէջ։ Գրագէտի համար չկայ աւելի դժբախտ կացութիւն, քան տարագրութիւնը, հայրենի միջավայրից հեռու ապրելը։ Այդ է պատճառը, որ, հակառակ քաղաքական անպատակայարմարութեան Ա. Իսահակեանի վերադարձը անխառն ուրախութիւն պատճառեց ինձ։ Որքան լսում եմ, նա հիասթափած է և մտածում է նորից գալ արտասահման, ափսո՜ս, հազար ափսո՜ս։

Է՜հ, Ձեզ շատ ձանձրացրի, կը ներէք։

Այսպէս, ուրեմն, կատարում եմ Երկրի ընկերների յանձնարարութիւնը (Ա. Իսահակեանի խնդրանքը)։

Ջերմ բարևներով՝ Ս. Վրացեան

Յունիս 8, 1927

Սիրելի Վրացեան,

Երևանէն ղրկուած նիւթերու, նաև Իսահակեանի յանձնառութեան առիթով գրուած ձեր նամակին՝ յատկապէս կը յայտնեմ իմ շնորհակալութիւնս։ Մրգաստանի Կոմիտէն[7] ալ հոս Կ. Կոմիտէի նամակ մը ղրկած է ըսելու որ վաղ անցնիմ Հայաստան երթալու մտադրութենէս։

Իսահակեան երբ Փարիզ էր, գրեց ինձ ու թէլադրեց, որ Հայաստան երթամ։ Ինք հնարաւոր դիւրութիւններ պիտի ստեղծեր։ Իր նամակին չկրցի պատասխանել, մինչև ինք Հայաստան գնաց։ Այս անգամ «Խորհրդային Հայաստան» թերթի հասցէով նամակ[8] մը գրեցի և Հայաստան երթալու տրամադրութիւնս յայտնեցի։ Գրած էի նաև թէ կը սիրեմ վիպակներուս երկրորդ գիրքը Հայաստանի մէջ հրատարակել։ Նամակիս պատասխանը ուշացաւ։ Կ'ենթադրէի որ շատ զսպուած ձևով գրած նամակս իր ձեռքը հասած չէ։ Ձեր նամակէն միայն իմացայ որ Իսահակեան հիասթափուած է ու կ'ուզէ դուրս գալ Հայաստանէն։ Վախնամ Իսահակեանին թոյլ չտան Հայաստանէ դուրս ելլէ, եթէ ուրիշ հնարաւոր միջոցներ չստեղծէ դուրս գալու համար։

Շատ մեծ կարօտն ունէի երկիր երթալ նոյնիսկ մի քանի ամիսով և կամ տարիով մը։ Իսահակեան խանդավառութիւնով գնաց հոն լրացնելու իր «Ուստա Կարօ»ն։ Եկուր տես, որ այդ պայմաններուն մէջ ոչէ գրական գործ չպիտի կարենայ ընել։ Մինչև ե՞րբ այս վիճակը...

Սիրալիր յարգանքներով՝ Համաստեղ

8. Գ. Երևանէն ղրկուած նիւթերը հետաքրքրական են բայց ոչ ներշնչիչ։ Իմ մտա կը պահեմ յարմար առիթներու համար։

Նոյեմբեր 19, 1928
Փարիզ

Սիրելի Համաստեղ.

Ինչպէս տեսնում եմ, բաւական ծոյլ մարդ եմ դարձել. վաղո՜ւց պէտք է գրած լինէի քեզ։ Վստահ եմ, սակայն, որ ներողամիտ կը լինես և շատ չես դատապարտի։

Գրքի մասին Ասատուրը[9] գրած է արդէն։ «Վէմ»ին[10] տրած նէրիդ համար շատ և շատ շնորհակալ եմ։ Բայց շնորհակալութիւնս կը բիւրապատկէր, եթէ գէթ մէջ փոքր գրուածք էլ հասցնէիք, «Վէմ»ի բնոյթին յարմար բովանդակութեամբ։

«Սրբազան Կատակերգությունը»[11] նոր միայն կարդացի և դեռ թարմ տպաւորութեան տակ եմ, չեմ սիրում կտոր-կտոր կարդալ և սպասեցի, որ ամբողջանայ։ Նման գործերը նիւթ ամբողջութեամբ մէկ անգամից հրատարակեն, շատ կը շահեն, ընթերցողը ամսէ ամիս կարդալով՝ չի կարող տպաւորութեան ամբողջութիւնն ունենալ և, հետևաբար, առնել գործից այն՝ ինչ որ նա ունի իրապէս։

Ասի՝ «Դեռ թարմ տպաւորութեան տակ եմ»։ Իմ վրայ շատ ուժեղ տպաւորութիւն տրաւ՝ և՛ խորքով, և՛ ձևով։ Յաւիտենական նիւթ է մշակուած, շատերն են այս կամ այն ձևով մօտեցել նրան. քեզ յաջողել է ինքնուրոյն մօտեցում, ասել ուրոյն ձևով, սեփական կնիք դնել, նոր ու մնայուն գործ տալ։ Իմ կարծիքով արուեստի լաւագոյն գործը այն է, որի թողած տպաւորութիւնը և առաջ բերած ապրումները չես կարող բառերով բացատրել-պէտք է զգաս և ապրես միայն, ինչպէս Բէթհովենի սիմֆոնիները։ Փորձէ՛ 9-րդ սիմֆոնին նեղկայացնել՝ կը ստացի դժգոյն և անհամ բան։ Բայց ամէն անգամ, երբ ես լսում եմ այդ աստուածային երաժշտութիւնը, գեղարուեստական անպատում հաճոյք եմ ապրում։

Եթէ ինձ հարցնես՝ ինչո՞ւմն է «Կատակերգութեանն» գեղեցկութիւնը, չեմ կարող բացատրել։ Նոյն իսկ կարող եմ թերի մասեր էլ ցոյց տալ, իսկ փիլիսոփայութեան հետ համաձայն էլ չեմ-մարդկութեան մասին ես աւելի լաւատես եմ-բայց ամբողջութիւնը՝ հրաշալի է։ Ինչպէս իրական գեղեցկուհին—մաս-մաս որ վերլուծես, բազմաթիւ պակասներ կարող ես ցոյց տալ, քիթն էլ լաւ չէ, մազերն էլ սիրուն չեն, իրեն պահելու ձևն էլ չգիտէ, բայց ամբողջութիւնը—կատարեա՛լ գեղեցկութիւն։

«Կատակերգութիւն»ը համարում եմ յաջող գործ, մնայուն ու «կոթողական» պիտի ասէի, եթէ Զօպանեան լինէի։ Ապրի՛ս։

Առանձին հրատարակութեան միտքդ շատ լաւ է, երանի՜ թէ հէնց սկզբից այդպէս արած լինէիր։ Հայ Գր. Բարեկամները սիրով կարող էին ստանձնել այդ գործի հրատարակութիւնը, եթէ մի փոքրիկ արգելք չլինէր—դրամ չունինք։ Արդէն ընթացքի մէջ է «Յետպատ. Հայ Գրակ.» երկրորդ հատորի հրատարակութիւնը, մի հատոր էլ պարտաւորուել ենք Բաֆֆիից կամ Բաֆֆիի մասին, որի համար գումար էլ ենք ստացել և արդէն ծուխսել։ Հիմա այդ երկու գործից դուրս մի նոր հատոր տալու բացարձակապէս ի վիճակի չենք։ Եթէ հնարաւոր լինէր այդտեղ որևէ ձևով ապահովել հրատարակութեան արժէքի գոնէ կէսը—190—150 դոլար, ես կարծում եմ, թէ կը կարողանայինք հերթից դուրս հատորը լոյս ընծայել։ Ի՞նչ ես կարծում։ Կարելի չէ՞ մի քանի ունևոր գրասէրների միջոցով գոյացնել այդ գումարը։

Ասատուրի հետ յաճախ կը նստինք ու աշխարհի հարցերը կը լուծենք. Փարիզի Cafe՝ները ամէն յարմարութիւն ունին նման զբաղումի համար։ Քեզի ալ յաճախ կը յիշենք, մանաւանդ երբ կը խորանանք մեր մշակոյթի ոլորտների մէջ, կամ լաւ ընկերների թումը կը կատարենք։ Ափսո՞ս, միայն Ասատուրներ քիչ կան այս նեղվեալ աշխարհում, այլապէս շատ հարցեր այլես կարգադրած կը լինէինք։

Ինտո՞ր ես։ Ս. Վրացեան

Հոկտեմբեր 28, 1948,
Սան Ֆրանսիսքո

Սիրելի Համաստեղ.

Կ՚ուզեմ տաք-տաք պատասխանել նամակիդ, քանի որ խնդիրը կը վերաբերի իմ սիրելի Զիաւորին։

Ցաւ զգացի՝ կարդալով գիրծներդ այդպէս յոռետես տրամադրութեամբ համակուած։ Կ՚ըմբռնեմ Արմէն Վահէի[12] դժուարութիւններն ու վարանումը։ Անկասկած, տպարանի աննախանձելի վիճակն է պատճառը, որ կը ձգձգէ «Սպիտակ Զիաւորի» հրատարակութեան գործը։ Բայց եթէ, իրօք, Վահէն կը խուսափի հրատարակելէ, ատիկա բաւակա՞ն է վհատելու։ Չէ՞ որ «Հայրենիք»ի

Գրական Հիմնադրամը ստեղծվեցաւ ճիշտ նման նպատակների համար։ Ինչո՞ւ չես խօսիր Դարբինեանի[13] հետ, որ կը հաւատամ թէ սիրով պիտի ուզէ հրատարակել Գր. Հիմնադրամի միջոցներով։ Եթէ դու որոշ փափկանկատութեամբ անյարմար կը նկատես, ուրիշ մէկը կրնայ խօսիլ։ Պայման չէ որ տպագրութիւնը անպատճառ «Հայրենիք» տպարանը ըլլայ. կարելի է Վենետիկ կամ Վիեննա ընել։ Մենք Մինախորեանի[14] հատորը Վենետիկ տպել պիտի տանք։ Ուրեմն, եթէ «Հայրենիք»ի տպարանը տարիներով ի վիճակի չըլլի, մեր հրատարակչական գործը կա՞նգ պիտի առնէ։ Մանաւանդ որ «Հայրենիք»ի վարիչները իրենց անփութութեան շնորհիւ է, որ դուրսէն գրաշար չեն բերեր։ Քանիցս ըսած եմ իրենց, որ Շտուտգարդ գրաշարներ կան, որ ուրախութեամբ կուգան. բերելու միջոցն ալ ցոյց տուած եմ։ Ամօթ չէ՞, որ մենք մեր տպարանը ձգած՝ վենետիկցիներուն կը դիմենք։

Եթէ Գրական Հիմնադրամն ալ չուզէ ինձ համար անըմբռնելի պատճառներով հրատարակել, նորէն յուսահատելու հիմք չեմ տեսներ։ Կարող ես վըստահ լինել, որ «Սպիտակ Ձիաւորի» հրատարակութեան համար դրամ տեղ կը գտնուի։ Եւ պէտք չկայ, որ ինքդ դիմես, թէև ատոր մէջ ալ նւաստացուցիչ բան չեմ տեսներ։ Ես այդ գործը կ'առնեմ իմ վրայ և հրատարակութեան միջոց կը գտնեմ, միայն թէ շուտով ամբողջացուր ձեռագիրը։ Երբ վերջակէտը դրած լինիս, և հատորը վերջնական ձևը առացած՝ տպարանին յանձնելու պատրաստ լինի, իմացուր ինծի։ Ես համոզուած եմ, թէ հրատարակութեան միջոց կը գտնեմ, առանց մազաչափ իսկ քո հեղինակի արժանապատւութիւնը վիրաւորած լինելու։ Մի՛ տնտնար։ Մի՛ պղտորիր ուղեղդ յոռետես մտածումներով։ Մարկոսին կամ Կիրակոսին դիմելու պէտք չկայ։ Բայց եթէ մտերիմ և քեզ սիրող ընկերներ ուզեն աջակցիլ գրքիդ հրատարակութեան, ատոր մէջ «հայ գրողի հպարտութիւնը» վիրաւորող ի՞նչ բան կայ։

Կ'աղաչեմ, ուրեմն, կ'աղերսեմ, կը պաղատիմ, կը պնդեմ, եթէ կ'ուզես, նոյն իսկ կը հրամայեմ—մէկ կողմ դիր համլետեան «լինել թէ չլինել»ները և անմիջապէս գործի անցիր։

Ալ ուրիշ ի՞նչ ըսեմ։ Նորութիւն չունիմ, որ գրեմ։ Օրն ի բուն սեղանիս գլուխը նստած՝ կը ճղմըեմ և աշխարհի ունայնութեան մասին կը խոկամ—Vanitas vanitatis[15]։ Ամենայն ինչ ընդունայն է։ Մարդու լաւ գործը և բարի անունը միայն կը մնայ։ Դժբախտաբար «բարի անուն»ի տեսակէտով տակաւին թաց է, չըսելու համար աւելին։

Ադոնցի[16] հատորը տեսա՞ր՝ խոնդկարիանի յոյս ընծայած։ Ինչպիսի՜ հաճոյքով կարդացի «Բագրատունիների փառքը»։ Ջհամաձայնելով հանդերձ հեղինակի որոշ մտքերուն, չես կրնար բաժնուիլ գիրքէն։ Գիտնական մարդը այսպէս կ'ըլլայ—ո՞ւր մեր փանաքի գրիչները։

Ողջոյնիւ և աղօթքիւ՝ Ս. Վրացեան

Հոկտեմբեր, 1948[17]

Սիրելի Վրացեան.

Կը տեսնեմ, որ բաւական գրաղուած ես։ Գրքերու և գրականութեան համար ընտրած ես լաւագոյն վայրը—խաղաղ Քալիֆորնիան։ Հիմա կը հասկնամ թէ ինչո՞ւ այդպէս կ'ուզես մնալ։ Ինչ ալ ըլլայ գրական աշխատանքի օրերն են այսպէս ըսուած «ապրուած օրերը» և մարդիկ աւելի երջանիկ են երբ կը ստեղծագործեն։ Ամերիկայի մէջ շատ մեծ ճիգ բոլ իմ այդ աշխարհը չէն պահելու համար։ Հիմա ինծի այնպէս կը թուի, որ դեռ քալելիք ճամբուս վրայ կամուրջները կը խախտին ու կը քանդուին։ Եւ դեռ չկրցի գտնել այն խաղաղութիւնը և տէրը ըլլալ իմ ժամանակին գրական աշխատանք կատարելու համար։ Մի դուցէ այդ փնտռելն ալ տկարութիւն է, որովհետև երբեք ալ չպիտի ըլլայ։

Կը գրես, որ «Սպիտակ Ձիաւոր»ը լրացնեմ, որ հրատարակուի։ Ես հրատարակութեան համար երբեք ալ յոյսեր չունիմ։ Քեզի կարծեմ ըսած եմ, որ «Ձիաւոր»ի երկրորդ մասը դրեթէ լրացուցած եմ և ունիմ մօտ 350 ձեռագիր էջեր։ Վերջին մասը կոկելու աշխատանք ըրած չեմ տակաւին, որովհետև ինչպէս ըսի չեմ յուսար որ հրատարակուի։ Միայն մէկ ձևով կրնայի վստահ ըլլալ, եթէ ես ինքս դրամ ունենայի և տայի տպագրութեան ծախքը ինչպէս ըրած եմ «Դիւցին» և «Անձրև»ին համար։ Ինծի այնպէս կը թուի, որ ես այլևս դիրք չեմ կրնար հրատարակել և այդ կարևոր պատճառներէն է խախտուած կամուրջներուն։ Կը յիշեմ տարիներ առաջ, մօտ 5 տարի առաջ եղաւ «Սպիտակ Ձիաւոր»ի հրատարակելու խօսքը։ Անկէ ի վեր կարծեմ երրորդ անդամ ըլլալով յիշեցուցած եմ Արմէն Վահէի։ Ինձ կը թուի, որ խուսափում կայ երբ կը թուէ բաւարար գործաւոր չունենալու պարագան։ Էհ, բան մը որ ինք պիտի շահի և շատ վստահ եմ անոր և սակայն ամէն անգամ որ յետաձգումի պատճառները կը թուէ կը զգամ, որ իմ հպարտութիւն կը վիրաւորուի։ Եւ ես այլևս խօսք չեմ ըներ և կը մոռնամ։ Այս ուղեցի քեզի գրել անկեղծ կերպով, դիտեմ որ կը հետաքրքրուիս «Սպիտակ Ձիաւոր»ի հրատարակութեան համար։ Իմ գրքերէն երբ մէկը ուղած է գնել ինձմէ, ես անոր նուէր տուած եմ և կամ թելադրած եմ որ դիմեն գրածախներուն։ Իմ այդ ըմբռնումը ուրիշ ձևի չի փոխուիր այլևս։ Ինչ որ է, գլուխ ցաւցուցի կարծեմ քիչ մըն ալ իմ մասին խօսելով։ Կը յուսամ լաւ է առողջութիւնդ։ Էն կարևորը այդ է, առողջ ըլլալ և լաւ բաներու մասին մտածել։ Շանթի աշխատանքը[18] լաւ կ'երթայ, երկու շաբաթէն յայտնի կ'ըլլայ թէ այստեղէն ինչքան կը հանդանակուի։ Կարևորը այն է, որ ուսումնասիրացները հետաքրքրուած են։ Բարիներ մեր տնեցիներէն։

Սիրով՝ Համաստեղ

Մարտ 12, 1951, Սան Ֆրանսիսքօ

Սիրելի Համաստեղ.

27/II նամակդ ժամանակին ստացեր եմ։ Ճիշդ ըսածիդ պէս՝ ես ալ զբաղած եմ հաշիւներ ընելով, թէ ինչո՞ւ նապաստակի ականջը երկար է և ուղտինը՝ կարճ։ Ինչքան ալ ուզես անտարբեր մնալ դէպի կեանքի երևոյթները, որովհետև մարդ ես, չես կրնար, դժբախտաբար, անտարբեր մնալ։ Եւ որովհետև կեանքի մէջ, յաճախ, յոռին է որ կ'իշխէ, ակամայ ինքդ ալ կը համակիս յոռետեսութեամբ։ Երանի՜ անոնց, որոնք ամէն բանէ վեր են, բայց այդպէս ըլլալու համար մարդ պէտք է ազատ ըլլայ մարդկային կիրքերէ, ինչ որ մեզի յատուկ չէ, տարաբախտաբար։

Օրինակի համար «Հայրենիք»ի շէնքը, որուն դուն ալ կ'ակնարկես։ Ես ալ քեզի պէս կը տառապիմ այդ շէնքով։ Հեռուէն կարօտը կը զգամ, իսկ երբ մէջն եմ՝ փախչելս կուգայ։ Այո՛, դժբախտաբար, մթնոլորտը լաւ չէ անոր մէջ, երբեմն անշնչելի դառնալու աստիճան, բայց զուր է կկուի պէս մեղադրել ուրիշները, որ բոյնը մաքուր չէ. կկուի մարմնի որոշ մասն է յանցաւոր, որ բոյնը աղտոտ է։ Ո՞ւր է դարմանը, կը դժվարանամ ըսել։ Վերջին Պատգամաւորական ժողովը, որուն կ'ակնարկես, աննախընթաց երևոյթ էր, որու նմանը ես տեսած չէի իմ ամբողջ կեանքիս մէջ։ Եթէ այդ ժողովի գլխաւոր դերակատարները խիղճ և ազնուութիւն ունենային իրենց կիրքը զսպելու և նոր անխղճութիւններ և անխելքութիւններ չընէին, թերևս, դարմանը դիւրութեամբ գտնուէր, բայց, ըստ երևոյթին, կիրքը կը շարունակէ աւերիչ գործը։ Այդ պայմաններուն մէջ դարման գտնելը շատ դժուար է։

Ես կեանքի փոռէն մէկ բան սորված եմ. երբ մէկը կը տեսնէ, որ իր պատճառով—արդար թէ անարդար—կիրքերը կը յուզուին և գործը կը տուժէ, ինքը պարտաւոր է քաշուիլ ասպարէզէն, դէթ ժամանակի մը համար։ Այդպէս եղած է մեր մէջ միշտ։ Հակառակ պարագային, երբ մէկը կ'ուզէ ամէն գնով իր կամքը պարտադրել—ինչպէս Աղբալեանը կ'ըսէր՝ «խրյար է՝ կեր»—հետևանքը կը լինի այն՝ ինչ որ կը տեսնես աչքերովդ։ Եւ, ի հարկէ, դարման

գտնելը անկարելի կը դառնայ։ Եւ կը ցաւիմ ըսելու, թէ անկարելի ալ պիտի լինի, քանի «իմ ուզածը թող ըլլայի» հոգեբանութիւնը չփոխի։

Ես ալ կը հետևիմ քու օրինակին—կը կարդամ։ Բայց ընթերցանութիւնը միայն «որպէս արուեստ և որպէս բանաստեղծութիւն» ինծի համար չէ. դրժբախտաբար։ Արուեստը՝ իր կարգին, բայց հնարաւո՞ր է «գրքերու աշխարհին մէջ ապրիլ», երբ կեանքի աշխարհը կայ՝ այնքա՜ն ալեծուփ ու խռովայոյզ։ Փղոսկրէ աշտարակի մէջ ապրելու հաճոյքը, աւա՜ղ, մեզի չէ տրուած։ Այս օրերս, օրինակ, ձեռքս է Օրմանեանի «Խօսք և խոհք»[19] հատորը։ Զգիտեմ՝ պոսթընաբնակներէն մէկը տեսա՞ծ է այդ հատորը։ Օրմանեանի հետ ինքդ ալ կ՝ապրիս անոր ներկայացուցած կեանքի խռովքը և կ՝ապշիս, թէ ինչպէ՜ս մեծ կարողութիւններով օժտուած անհատներ ընդունակ են փոքրութիւններու ճահիճը իջնելու։ Կամ ահա՝ աչքէ անցուցի Վ. Թէքէեանի նորատիպ հատորները[20]. միևնոյն երևոյթը—մեծութիւն ու փոքրութիւն (ցածութիւն) գիրկընդխառն։ Անգամ մըն ալ—հինգերորդ անգամը կարծեմ—կարդացի «Տոն Քիշոթը», և դարձեալ—ինձ յուզեցին մեր կեանքի տոն քիշոթները։ Շէքսպիրը ձեռքս առի, և «լինել-չլինելու» տամոքլեան սուրը նորէն կախուեցաւ գլխուս վերև։ Չէ, սիրելի Համաստեղ, ներկայ անիծեալ օրերուն կարելի չէ անխռով սրտով «գրքերու աշխարհին մէջ ապրելու հաճոյքը» վայելել։ Ուզես-չուզես՝ նորէն պիտի երթաս «Հայրենիք»ի շէնքի պաթախը[21] ու ինքդ ալ այրուիս կրակին մէջ։ Այսպէս է կեանքը։ C'est la vie! պիտի ըսէր ֆրանսիացին։

Մի տեղ, սակայն, կարող ես գտնել քիչ մը հոգեկան անդորրութիւն—հողի և սերմերու հետ, պարտէզիդ մէջ։ Ես ալ հոս կը քրքրեմ հողը և այդ պահերուն կը մոռնամ ամէն բան։ Երևի պատճառը այն է, որ մենք հողեղեն ենք. հող էիր և հող դարձիր։ Հողը լոկ մոռցնել կուտայ և՛ կիրք, և՛ տենչանք, և՛ ամենայն ինչ որ ունայն է։ Բայց քանի՞ հոգի ընդունակ է հողը տեսնելու և հողի ձայնը լսելու։ Քիթերը վեր, աչքերը վեր յառած՝ մարդիկ կը կարծեն, թէ իրենք երկինքը սաւառնող արծիւներ են, մինչդեռ հողի մէջ խլրտող ճիճուներ իրապէս...

Ջերմ բարևներս Սրբուհիին և ձագուկներուդ։

Սիրով՝ Ս. Վրացեան

24 Մայիս, 1954
Պէյրութ

Սիրելի Համաստեղ.

Երէկ հինգ Ջիաւորներ[22] ևս եկան, որով ընդամէնը տասնչորս հատ։ Տասնչորս անգամ քսանհինգ լիբանանեան ոսկի կամ 8 ամերիկեան տոլար եւ քանի մը սենթ հաւասար է 120 տոլարի։ Այս գումարը ստանալու համար բարի եղիր անցնելու Հայ օգնութեան Միութեան ղրասենեակը եւ խնդրելու, որ վճարեն ճեմարանի հաշուոյն։ Իրենց ալ կը գրեմ։

Գիրքերը, հակառակ այստեղի համար առասպելական գնի, արագութեամբ սպառեցան և մեծ հետաքրքրութիւն ստեղծուեցաւ անոնց շուրջ։ Հրապարակային արտայայտութիւն չկայ։ Ամառուայ տօթերը որ անցնին, աշնան յոյս ունիմ կ՝ունենանք և հրապարակային արտայայտութիւններ—գրական ժողովներ և այլն։

Ցուսամ ձեզ մօտ ամէն ինչ լաւ է և պարտէզդ ալ ծաղկեալ վիճակի մէջ է։ Հիմա չափով մը խնամի դարձանք մենք, մեր աղջիկը՝ Սոֆիկը Ստեփանին[23] տալով։ Մեր շրջանակի մէջ—պարսկահայերու—յաճախ խօսքի առարկայ կ՝ըլլայ նորապսակ զոյգը։ Իմ ջերմ շնորհաւորութիւններն ալ։

Ամիս մը մնաց ճեմարանի տարեշրջանը լրացնելու համար։ Դէշ տարի չեղաւ, թէև կրնար աւելի լաւ ըլլալ, եթէ մեր նիւթական միջոցները աւելի լաւ լինէին. ես ալ ընդհանուր առմամբ կը քալեմ։

Մեր մանկապարտէզի պղտիկներէն մէկուն կը հարցնեն. «Ի՞նչ կ՝ընէ ձեր տնօրէնը»։ Կը պատասխանէ. «Հէ՛չ, միայն կը քալէ»։ Ամէնաճիշդ ընորոշումը տուած է իմ պաշտօնին. միայն կը քալեմ։

Յուսամ դուն միայն բալելով չես բաւականանար և պահ մը հանգստանալէն յետոյ Զիաւորէն ետքը սկսած ես նոր գործի—ի՞նչ։

Ջերմագին բարևներս Սրբուհիին և զոյգ վսեմաշուք օրիորդներուն։

Սիրով՝ Ս. Վրացեան

Նոյեմբեր 19, 1966
Պէյրութ

Սիրելի Համասաեղ.

Բաւական ժամանակ է քեզ չեմ գրած և վաղուց լուր չունիմ քեզմէ։ Այս օրերուս իմացայ, մեծ հաճոյքով, որ Ամերիկայի մէջ որոշուած է տօնել քո յոբելեանը։ Ո՞վ է որոշողը, ի՞նչ պայմաններու մէջ, ի՞նչպէս՝ չգիտեմ, բայց լուրը ինձ համար այնքան հաճելի էր, որ անմիջապէս ներկայացուցի Համազգայինի Կենդրոնական Վարչութեան ժողովին, և որոշեցինք մենք ևս, մեր բոլոր մասնահիւղերով միանալ։

Այդ՝ հաւատարիմ ժողովուրդի իմաստութեան՝ «ջուրը իմէ ակէն», որքան ալ ծանօթ ըլլամ համեստութեանդ, կը խնդրեմ անգամ մը ևս համեստ եղիր և տուանց տնտնալու պատասխանէ ինձ։

Ե՞րբ պիտի տօնուի յոբելեանը և ի՞նչ ծաւալով՝ միայն Ամերիկայի՞, թէ՞ սիեպերական սահմաններուն մէջ։

Եւ ուրիշ մանրամասնութիւններ։

Դու երևի կը յիշես, որ երբ տասնեակ տարիներ առաջ կը տօնուէին Զօպանեանի և Ահարոնեանի յոբելեանները[21], ես հակառակ արտայայտութիւն ունեցայ։ Համազգային աղէտի յուշերը դեռ թարմ էին, Հանրապետութիւնը ընկած էր, ժողովուրդի կէսը տարագիր, թափառական, անօթի, մտքով շփոթ։ Իմ կարծիքով, այդ պայմաններու մէջ, անձնական յոբելեանը տօնելը՝ ժողովուրդին անարդանք հասցնել կը նշանակէր։ Այսօր բոլորովին տարբեր է կացութիւնը թէ՛ Հայաստանի, թէ՛ Սփիւռքի մէջ։ Հայաստանի մէջ, Սթալին-Պերիա տապալումով, ճղակոտոր եղած հայ ժողովուրդը, կը յիշե՞ս, Թոլստոյի կայծակնահար կաղնիի պէս, նոր ծիլեր արձակելով՝ սկսած է կենդանանալ ու բոլորին զարմացնել իր կենսունակութեամբ։ Սփիւռքը ինքզինք գտած՝ այլևս անուեր դաղթականներու բազմութիւնը չէ և, հակառակ կարդ մը երկիրներուն մէջ դարնուած վայրենի ազգայնամոլութիւններու, որպէս ամբողջութիւն տնտեսապէս և մշակութապէս բարեկեցիկ վիճակի մէջ է և ի վիճակի է նիւթապէս ու բարոյապէս յարգանքի տուրք ընծայելու իր արժանաւոր զաւակներուն։ Եւ ինձ քնաւ չի դարմացներ, այլ սրտանց կ՚ուրախացնէ, որ ամերիկահայ հայրենակիցներ մտածած են տօնել քո յոբելեանը, դարձեալ իմ կարծիքով, ամենէն արժանաւորը Սփիւռքի մեր գրողներուն մէջ։ Եթէ այս պայմաններուն մէջ տօնուէր Զօպանեանի կամ Ահարոնեանի յոբելեանը, ի հարկէ, իմ վերաբերումն ալ կը լինէր եղածէն տարբեր։

Այս՝ այսպէս։ Այլապէս ինչպէ՞ս է տրամադրութիւնդ։ Ի՞նչ եղաւ նոր վէպդ[25], որուն լոյս տեսնելը կը սպասեմ անհամբեր։ Եթէ հրատարակութեան «թեքնիք» դժուարութիւններ կան, թերեւս, մենք կարողանանք տպագրել այստեղ։ Յունուարի սկիզբէն սկսած պիտի գործէ մեր նոր տպարանը, որ սարքաւորման մէջ է, շուրջ 50 հազար դոլար արժողութեամբ։ Արդիական տպագրական մեքենաները—տողաշար, տպող, մեծ ու փոքր մեքենաներ արդէն ստացուած են։ Մեր թիւ 8-րդ շէնքի ամբողջ ընդարձակ գետնայարկը, բոլոր յարմարութիւններով յատկացուած է տպարանի և կազմատան։ Ի նկատի ունենալով տպագրական գիներու ածանութիւնը Լիբանանի մէջ, մենք յոյս ունինք, որ մեր նոր տպարանը յաճախորդներ կ՚ունենայ նաև արտասահմանի զանազան երկիրներէն։

Եւ, վերջապէս, ինչպէս են Լորիկն ու Արմինէն[26] և իրենց սիրելի մայրիկը։ Յուսամ ամէնքն ալ լաւ են և դժգոհ չեն մնար, եթէ իրենց ուղարկեմ իմ

ջերմ բարեւները և կենսուրախութեան մաղթանքները վերահաս Քրիստոսի[27] և Նոր տարուայ առթիւ։

Իմ մասին շատ բան չունիմ գրելիք։ Ոտքի վրայ եմ դեռ։ Զբաղուած եմ Ճեմարանով։ Աղատ ժամանակս, ուրիշի օգնութեամբ, թուղթ կը մրոտեմ։ Ամառը, Յունաստանի մէջ, պատրաստեցի իմ «Կեանքի ուղիներով» Ե հատորը[28]։ Այս օրերուս, իմ պատրաստութեամբ, լոյս կը տեսնէ Քաջազնունիի «Յետ մահու» հատորը[29]։ Եւ նման խրվըր-զրվըր բաներ։

Երէկ ստացուեցաւ Օգանի մահուան լուրը[30]։ Այսօր այստեղ հողին կը յանձնենք ամերիկեան համալսարանի փրոֆ. Ջաղլասեանը։ Վերջերս, այս երկու ամիսներու ընթացքին Ամերիկայէն առի հինգ սիրելի ընկերներու մահուան գոյժը։ Ի՞նչ է պատահել մեզ։ Կատարեալ կոտորած է[31]։

Քեզ լաւ պահէ։ Առողջութեանդ հոգ տար։ Ջերմ և կարօտով բարեւներս բոլորին։

Սիրով՝ Ս. Վրացեան

Ապրիլ 4, 1966
Պէյրութ

Սիրելի Համաստեղ.

Աւա՜ղ, Սրբուհին մեր բոլորի յոյսերը ի դերեւ հանեց[32]։ Ես գոնէ համոզուած էի, աւելի հաւատացած, որ ան պիտի յաղթահարէ բոլոր նեղութեանց և պիտի ապրի դեռ, բայց ճակատագիրը երևի այդ բանն էր տնօրինած։ Գիտեմ, որ շատ ծանր ազդուած ես, նաև Արմինէն ու Լորիկը, որոնց համար Սրբուհին միայն մայր չէր, այլ և ընկերուհի։ Բայց, սիրելի Համաստեղ, Սրբուհին իր բացակայութեամբ ալ ներկայ պիտի ըլլայ ձեր յարկին տակ և պիտի շարունակէ իր ներկայութեամբ կեանքը աւելի տանելի դարձնել ձեզ։ Մասնաւորապէս դու չպէտք է ընկճուիս և շարունակես այն գործը, որ բնութիւնը սահմաներ է քեզ համար՝ աւելի եռանդով և աւելի համոզուած։

Խօսքս յոբելեանի մասին չէ։ Բնական կերպով ան պիտի յետաձգուի ժամանակի մը համար։ Գիտես, ի հարկէ, որ ժամանակը լաւագոյն բժիշկն է։ Յոբելեանը կը կատարենք անկասկած, եկող աշնան, վստահ եմ, մեծ ջերմութեամբ։ Կարևորը կիսատ մնացած կամ նոր գործերը շարունակելն է։ Գրած էիր, որ հազար էջեր ձեռագիրներ ունիս և, անշուշտ, նոր մտածումներ ալ կան։ Սրբուհիի կորուստը պատճառ պէտք չէ դառնայ, որ ձեռք քաշես անոնցմէ. ընդհակառակը անոր յիշատակը պէտք է քաջալերէ քեզ աւելին ընելու։

Իմ սէրս և վշտակցութիւնս Լորիկին և Արմինէին։ Իմ ցաւակցութիւնս բոլոր. առողջ և քաջ կեցիր։ Իմ ջերմ յարգանքը Սրբուհիի յիշատակին։

Քեզ միշտ սիրող՝ Ս. Վրացեան

Ապրիլ 4, 1966

Սիրելի Վրացեան.

Մեր Սրբուհիի մահէն յետոյ առաջին անգամն է, որ սիրտ բռնեցի քեզի գրելու։ Կորուստը շատ է ծանր ու չենք կրնար հաւատալ որ այլևս չկայ։ Ան տունին մէջ է, խոհանոցը, վերէն՝ սանդուղքներէն վար կ'իջնէ. իմ միայնութեան մէջ երբեմն ձայնը կ'առնեմ։ Վերջերս միայնակ եմ ցորեկները։ Բարեկամներու յաճախ այցելութիւնները չգիտէի որ այնքան լաւ դեր կրնան կատարել։ Կը խօսինք և կը հեռանամ պահ մը։ Ամերիկեան թերթերուն բանթողութեան պատճառով մօտ ամիս մըն է տունն եմ։ Աշխատանքի փափաքս ալ կորսնցուցի։ Ինչի՞ և որո՞ւ համար, ես որ առանձինն հաճոյք դրած էի իմ օրուայ աշխատանքին մէջ։ Երջանիկ էինք։ Սրբուհին թէ տունը և թէ դիս պարպեց՝ իր հետ տարաւ։

Ցաւակցական հեռագիրներ շատ շատ ստացայ։ Էհ, ինչ կրնան ըսել։ Գիտեմ, որ խօսքը շատ է տկար սիրելիի մը մահուան առջև։ Կը փորձեմ գրա-

կան աշխատանքի մէջ մտնել մոռնալու համար, բայց առ այժմ չեմ կրնար կեդրոնացնել ինքզինքս։ Յուղում ու ալիք կայ երբեմնի իմ հանգիստ խաղաղ լճակին մէջ։ Անոր մէջ ցոլացող երկինքն անդամ ալիքներուն մէջ ինկած է։

Շնորհակալութիւն քու և Համազգայինի ցաւակցականին համար։ Գիտեմ, որ դու ինքդ աւելի ցաւեցար, որովհետև լաւ գիտէիր մեր ազնուական Սրբուհին։ Առանձնապէս կ'ուզեմ, որ իմ կողմէն իմ գնահատութիւնը յայտնես Իշխանին, Բանեանին, Շահինեանին իրենց ցաւակցական նամակներուն համար։ Կը գրեմ անոնց, եթէ ինքզինքս գտնեմ։

Սա օրերու յոբելեանը իմ ուսիս աւելի ծանրացաւ։ Շատ խնդրեցի, որ աշունին յետաձգուի։ Կ'ենթադրեմ այնպէս ալ պիտի ըլլայ։ Բնաւ սիրտ չունիմ ժողովուրդին ներկայանալու իմ սուգին ընթացքին։ Ըսած էիր նամակիդ մէջ, որ Ճեմարանի տպարանը կ'ուզէ իմ մէկ գիրքը հրատարակել յոբելեանին առիթով։ Հրատարակուած գրքերէն «Անձրևը կարելի էր երկրորդ տպագրութիւն ընել։ Սպառած է։ Ես գրած էի քեզի իմ բոլորովին նոր ձեռագրի մը մասին, որ լրացած է և կ'ըլլայ մօտ 150 էջնոց գիրք մը—վէպ։ Իմ միակ աշխատանքը զայն «մաքուր»ի առնելն է։ Գուցէ ժամանակ առնեմ այդ աշխատանքին համար, որ իմ ձեռագիրը անշնորհք է։ Այդ ձեռագիրը կ'ենթադրեմ 150 տպագրական էջ կ'ըլլայ։ Պիտի ջանամ ղրկել մէկ ու կէս ամիսէն։ Այդ աւելի կարևոր է յոբելեանին առիթով հրատարակելու համար։

Կը յուսամ առողջութիւնդ լաւ է։ Իմ բարևները Բանեանին, Իշխանին, Շահինեանին, Մելիքսէթեանին[38]։

Սիրով՝ Համաստեղ

3. Գ. Բարևներ իմ որդի մնացած Լորիկէն և Արմինէէն։ Շնորհակալութիւն Համազգայինի ցաւակցութեան համար։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Դրանց կրկնօրինակները պահվում են գրականության և արվեստի թանգարանում (այսուհետև՝ ԳԱԹ)։

2. ԳԱԹ, Համաստեղի ֆոնդ, № 234, 235։

3. «Հայրենիք» օրաթերթը լույս է տեսնում 1899-ի մայիսի 1-ից, 1899—1900-ին՝ Նյու Յորքում, 1900-ից՝ Բոստոնում։ Նույնանուն հանդեսը լույս է տեսել 1922—1970-ին, Բոստոնում։

4. «Հայրենիք» օրաթերթ, 3. III. 1965։

5. Բեյրութ, 1962, էջ 335։

6. ՀՅԴ օրգան «Դրօշակ» թերթը լույս է տեսնում 1891-ից։

7. ՀՅԴ Երևանի կոմիտեն է։

8. Պահպանվել է Համաստեղի նամակը Ավ. Իսահակյանին։ Նամակը գրված է 1926-ի դեկտեմբերի 26-ին, պահվում է ԳԱԹ-ում (Ավ. Իսահակյանի ֆոնդ № 1326)։

9. Ասատուր Խտրյան (1893—1955), ՀՅԴ նշանավոր գործիչ, Համաստեղի մտերիմներից։ ԳԱԹ-ում (Համաստեղի ֆոնդ, № 129) պահվում են նրա 12 նամակները՝ Համաստեղին։ 1938-ի նոյեմբերի 17-ին նա գրել է, որ Համաստեղի հասցեով ուղարկել է 100 գիրք։ Ենթադրում ենք՝ խոսքը 1929-ին Փարիզում լույս տեսած «Անձրև» ժողովածուի մասին է, որի տպաքանակի՝ իրեն հասանելիք մասը Համաստեղը մեծ դժվարությամբ կարողացավ հասցնել Ամերիկա։ 1935-ի փետրվարի 18-ին Համաստեղը գրել է Կ. Սիտալին. «Անձրևն էն 500 օրինակ Փարիզ մնաց։ Անպիտանները չի ղրկեցին» (ԳԱԹ, Կ. Սիտալի ֆոնդ, թիվ 151)։

10. «Վէմ» հանդեսը լույս է տեսել Փարիզում, 1933—1939 թվականներին։ Խմբագիր՝ Ս. Վրացյան։

11. «Սրբազան կատակերգություն կամ Տոմար Մաքիաներ» լույս է տեսել «Հայրենիք» ամսագրի 1938-ի № 4—9-ում։ 1960-ին, Կահիրեում պոեմը լույս է տեսել «Այծեռոմար և ուրիշ բանաստեղծություններ» գրքում «Այծեռոմար» վերնագրով։

12. «Հայրենիքի» վարչության վարիչ Արմեն Վահեն է։

13. Ռուբեն Դարբինյանն է (Արտաշես Չիլինգարյան, 1883—1968), «Հայրենիք» օրաթերթի և ամսագրի խմբագիրը։ Համաստեղի 70-ամյակին նվիրված հոդվածում նա հիշում է իր առաջին տպավորությունը գրողի «Ոգին կար ամուն էր» պատմվածքի ձեռագրից՝ «Հրա-

տպագրելու արժանի որևէ բան չսպասելով այդպիսի ձեռագրէ մը»: Բայց քէչ անց խմբագիրը հիացած էր պատմվածքով և փնտրում էր ամաչկոտ սկսնակ գրողին: Դարբինյանը գրում է, որ իր կյանքի ամենէն թանկագին յիշողութիւններէն մեկը եղած է... ծանօթութիւնը Համաստեղի անձին հետ» (Հայրենիք, 11. XI. 1966):

14. Վահան Մինախորյանի «1915 թվականը. Արհավիրքի օրեր» գիրքը լույս է տեսել Վենետիկում, 1949-ին: Համաստեղի անձնական գրադարանում, որ պահվում է ԳԱԹ-ում, կա գրքի օրինակը:

15. Ունայնություն ունայնությանց (լատ.):

16. Խոսքը հայ նշանավոր պատմաբան, բյուզանդագետ, բանասեր Ն. Ադոնցի (Տեր-Ավետիքյան, 1871—1942) «Պատմական ուսումնասիրություններ» գրքի մասին է, որ Ա. Խոնդկարյանը լույս է ընծայել Փարիզում, 1948-ին:

17. Նամակն անթվակիր է: Թվագրում ենք ըստ բովանդակության:

18. Գրող, մանկավարժ, ՀՅԴ նշանավոր գործիչ, Բեյրութի Հայ ճեմարանի (հետագայում՝ Նշան Փալանճյան) հիմնադիրներից Լևոն Շանթը (Սեղբոսյան, 1859—1951) 1948-ին Ամերիկայում հօգուտ այդ կրթօջախի հանգանակեց 127.000 դոլար: ԳԱԹ-ում [Համաստեղի ֆոնդ, № 3 (լրացուցիչ)] պահվում է Համաստեղի խոսքը միջոցառման մասին: «Հայու աչքերուն մէջ թաքնուած այն յամառ ուժը-ոգին և մշակոյթը» Համաստեղն անվանում է ամեն գոյութենը դարերով ապահովող կռվան, որի առաջ անզոր ու տկար է թշնամին:

19. Հայ նշանավոր հրապարակախոս, պատմաբան, բանասեր, Կ. Պոլսի պատրիարք (1896—1908) Մաղաքիա Օրմանյանի (1841—1918) «Խոհք և խօսք» աշխատությունը լույս է տեսել 1929-ին:

20. Խոսքը Վահան Թեքեյանի (1878—1945) «Ամբողջական երկերի» (հ. 1—9, Կահիրե, 1949—1950) առաջին գրքերի մասին է:

21. Ռուբենի (Մինաս Տեր-Մինասյան, 1882—1951) «Հայ յեղափոխականի մը յիշատակները» գրքի 6-րդ հատորի (Երևան, 1990), 37-րդ էջում կա այս բառի բացատրությունը. «Պաթախ, այն ցեխն է, որուն մէջ անիւները խրուելով չեն կրնար շարժիլ»:

22. ՀՅԴ նշանավոր գործիչներ Ալեք Փիլիպպոսը (Փիլիպպոսյան), Հակոբ (Հերրի) Քարյանը և Տրդատ Գազանճյանը 1950-ին Լոս Անջելեսում հիմնեցին մասնավոր տպարան, լույս ընծայեցին Ռուբենի՝ վերը հիշատակված գիրքը և Համաստեղի «Սպիտակ Ձիաւորի» երկու հատորները (1952):

23. Համաստեղի եղբայրն է (1907—1969):

24. Արշակ Չոպանյանի (1872—1954) գրական գործունեության հոբելյան է նշվել Սփյուռքում՝ 1925-ին, 1938-ին, 1950-ին: Ավետիս Ահարոնյանի (1866—1946) հոբելյանը նշվել է 1930-ի մայիսի 10-ին, Փարիզում:

25. Խոսքը «Առաջին սերը» վիպակի մասին է, որ լույս է տեսել 1966-ին, Բեյրութում:

26. Համաստեղի դուստրերն են՝ Լորետտան (ծնվ. 1939-ի հունվարի 20-ին) և Արմինեն (ծնվ. 1942-ի նոյեմբերի 28-ին):

27. Սուրբ ծնունդ:

28. Լույս է տեսել 1966-ին, Բեյրութում:

29. Լույս է տեսել 1965-ին: Համաստեղի անձնական գրադարանում պահվում է գրքի օրինակը՝ Ս. Վրացյանի ընծայագրով:

30. ՀՅԴ նշանավոր գործիչ, «Հայրենիքի» խմբագիր Մերուժան Օզանյանի մահագիրը տպագրված է «Հայրենիք» օրաթերթի 1965-ի նոյեմբերի 18-ի համարում: Նոյեմբերի 23-ի համարում տպագրված է Համաստեղի դամբանական խոսքը Մ. Օզանյանի թաղման ժամանակ:

31. «Հայրենիք» օրաթերթի 1966-ի հունվարի 13-ի համարում լույս է տեսել Ս. Վրացյանի հոդվածը՝ «Տերևաթափ» վերնագրով: «Վերջերս Ամերիկայից եկած նամակներից ես սկսել եմ վախենալ»,—գրում է նա:—Ցրտաշունչ աշուն լինի կարծես այնտեղ: Ամէն օր փոսթը մի սև լուր է բերում. իրար ետևից այս աշխարհից սիրելի դեմքեր են հեռանում»:

32. Համաստեղի կինն է՝ Սիրուհի Պեկյանը (1903—1966): Սիրուհու մահվան կապակցությամբ Համաստեղի ստացած ցավակցական հեռագրերը պահվում են ԳԱԹ-ում [Համաստեղի ֆոնդ, № 28 (լրացուցիչ)]:

33. Նկատի ունի «Ակոսի» (Բեյրութ, 1944—1969) խմբագիր Դանիել Բոնյանին, բանաստեղծ Մուշեղ Իշխանին (Ճենտերեճյան, 1914—1990): Համաստեղի մասին մենագրության (Համաստեղ, Բեյրութ, 1961) հեղինակ Գր. Շահինյանին և Համազգայինի գործավար Օննիկ Մելիքսեթյանին (1911—1966):